ՄԻ ԴՐՎԱԳ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

(Սիսիանի ազատագրումը)

Հայաստանում խորհրդային իշխանությունը դեռ նոր էր ամրապնդվում, երբ դաշնակցականները համախմբելով հակահեղափոխական տարրերին՝ 1921 թ. փետրվարի 13-ին կազմակերպեցին զինված խռովություն։ Սկսվեց քաղաքացիական պատերազմը Հայաստանում։ Այդ հակահեղափոխական ելույթը ուներ մի նպատակ՝ տապալել խորհրդային իշխանությունը Հայաստանում և վերականգնել հին կարգերը։

Ինչպես հայտնի է, Հայաստանի քաղաքացիական պատերազմը ունեցել է երկու էտապ. առաջին էտապը մեզ համար եղել է ամենածանր շրջանը, որն ընդգրկում էր Երևանի անկումից և դեպի Խոր Վիրապ—Բոյուքվեդի դիծը կատարած նահանջից մինչև Երևանի վերագրավումը (1921 թ. փետրվարի 13-ից մինչև ապրիլի 2-ը)։ Երկրորդ էտապը Դարալագյազի կոիվների շրջանն էր՝ ընդհուպ մինչև դաշնակների վերջնական ջախջախումը Զանգեզուրում (1921 թ. ապրիլից մինչև հուլիսի 13)[1]։

Հայաստանի քաղաքացիական պատերազմի առաջին էտապում հայկական հատուկ ջոկատը (որը հետագայում վերակազմվեց իբրև 4-րդ հայկական Լոռվա գունդ) և հայկական հեծյալ գունդը Լոռվա պարտիզանական ջոկատը Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի հետ միասին կռվում էին Վրաստանի մենշևիկների դեմ։ Հիշենք և այն, որ մեր բանակի մի մասը փետրվարին մասնակցում էր վրացական մենշևիկյան կառավարության տապալման համար մղված գործողություններին։

Վրաստանի խորհրդայնացման գործում զգալի դեր կատարեցին նաև հայկական կարմիր զորամասերը[3]։

Հայաստանի քաղաքացիական պատերազմի երկրորդ էտապում հայկական կարմիր բանակի Լոռու 4-րդ գունդը 1921 թ. մայիսի երկրորդ կեսին Թիֆլիսից տեղափոխվեց Էջմիածին։ Կազմակերպվեց 3-րդ դիվիզիան, դիվիզիայի հրամանատար նշանակվեց Ա. Ազատյանը, քաղղեկ՝ Հ. Սուքիասյանը։ Գնդի հրամանատարն էր ընկ. Տրավկինը, տեղակալը՝ Ա. Հովակիմյանը, կոմիսարը՝ Իսակ Նադիրովը։

Գունդը Էջմիածին տեղափոխվեց այն ժամանակ, երբ Հայաստանի կառավարության և «Վեռնային Հայաստանի» կառավարության միջև սկսվել էին խաղաղ բանակցություններ. Խորհրդային Հայաստանի կառավարությունը ամեն կերպ ձգտում էր արյուն չթափել Զանգեզուրի համար և հարցը խաղաղ ճանապարհով լուծել։ Բանակցություններ վարելու համար Հայաստանի խոր-

---

1 Տե՛ս Օ. Վարդանյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, 1931, էջ 15։

2 Տե՛ս ՀՍՍՀ ԴԱ «Տեղեկագիր», 1963, № 4, էջ 67։

3 Տե՛ս Ա. Մյասնիկյան, Ընտիր ժողովածու, 1957, էջ 372։

հրդային կառավարությունը 1921 թ. մայիսի 12-ին ներկայացուցիչներ նշանակեց Ա. Կարինյանին և ռուսական կարմիր բանակի ներկայացուցիչ Վ. Մելնիկովին։

Երկու կողմի ներկայացուցիչները հանդիպեցին 1921 թ. մայիսի 12-ին Սիսիանի Ղալաջաղ գյուղում։ Առաջին նիստը ղեկավարում էր «Լեռնահայաստանի» ներկայացուցիչը։

Երկրորդ նիստը տեղի ունեցավ 1921 թ. մայիսի 12-ին։ Նիստը ղեկավարում էր Խորհրդային Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա. Կարինյանը։

Այդ նիստում ելույթ ունեցավ Վ. Մելնիկովը, որը «Լեռնահայաստանի» կառավարության ներկայացուցիչներին հղեց հետևյալ գրավոր պաշտոնական դիմումը. «Մեր իշխանությունը հենվում է մեր ժողովրդի բոլոր աշխատավոր տարրերի վրա, որպես ժողովրդական իշխանություն նա այստեղ, ինչպես և Ռուսիայում ձգտել ու ձգտում է օգտագործել բոլոր խաղաղ միջոցները լուծելու համար այն խնդիրները, որ ստեղծել է այսօրվա կացությունը։ Խորհրդային կառավարությունը պատերազմի է դիմել ամենածայրահեղ պայմաններում. այժմ պատերազմը շարունակվում է Հայաստանի և Լեռնահայաստանի միջև, որովհետև Լեռնահայաստանը մնալով անջատ Խորհրդային Հայաստանից որպես անկախ մի միավոր՝ դրանով իսկ դառնում է իմպերիալիզմի համար մի գործիք, որն ուղղված է Անդրկովկասյան սովետական հանրապետությունների և ամենից առաջ Խորհրդային Հայաստանի դեմ։

Առաջին և հիմնական նախապայմանն է՝ հաստատել խորհրդային իշխանություն Զանգեզուրում։

Խնդրում ենք կարճ ժամանակում տալ պատասխան»։

Լեռնահայաստանի ներկայացուցիչների ղեկավար Տեդեոն Տեր-Մինասյանը առաջարկեց երկու օր ժամանակ տալ։ Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը որոշեցին բոլոր պաշտոնական գրությունները ամբողջությամբ ուղարկել կառավարությանը և սպասել պատասխանին մինչև 1921 թ. մայիսի 15-ը[4]։

Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներ Ա. Կարինյանը և Վ. Մելնիկովը վերադարձան Երևան մայիսի 19-ին[5]։

1921 թ. ապրիլ-մայիս ամիսներին կարմիր բանակի հրամանատարության և խորհրդային իշխանության ուշադրությունն ուղղված էր Զանգեզուրի վրա, որտեղ Երևանից վոնդված «Հայաստանի փրկության կոմիտեի» ղեկավարությամբ կենտրոնացել էին խորհրդային իշխանությունից դժգոհ տարրերը։ Զանգեզուրում այսպես կոչված, «Լեռնային Հայաստանի» կառավարության և նրա բանակի գլուխը կանգնած էր խմբապետ Նժդեհը։

Հայաստանի խորհրդային կառավարությունը, նկատի ունենալով, որ Զանգեզուրի խնդիրը խաղաղ ճանապարհով կլուծվի, որոշեց գյուղատնտեսության մեջ բանվորական ձեռքի պակասության պատճառով զորացրել մեծահասակներին, որոնք կազմում էին բանակի մոտ 50 տոկոսը, իսկ այս հանգամանքը զգալի չափով ազդեց կարմիր բանակի մարտունակության վրա[6]։

Խմբապետ Նժդեհը լսելով Զանգեզուրի սահմանի վրա կարմիր բանակի կենտրոնացման մասին, վճռեց 1921 թ. հունիսի 15-ին հարձակման անցնել

---

4 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆոնդ 113, գործ 61, թղթ. 1, 4, 14, 15։

5 Տե՛ս «Կոմունիստ» թերթ, 1921 թ., մայիսի 19։

6 Տե՛ս Ա. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը, 1931, էջ 94։

Դարալագյազի ճակատում և վերջ տալ հայկական կարմիր զորամասերին, այնուհետև ընդհանուր ուժերով հարձակվել Ղարաբաղ-Զանգեզուր ճակատի վրա։ Հարձակման ժամանակ հայկական կարմիր բանակը, թույլ ղեկավարության պատճառով, զգալի կորուստ տալով ետ նահանջեց և գրավեց պաշտպանության նոր գիծ։

Դարալագյազի վրա դաշնակների հարձակման պայմաններում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը արագացրեց Զանգեզուրի ազատագրման նախապատրաստությունը։

Հունիսի 20-ին կովկասյան բանակի կարմիր հրամանատարը հրաման արձակեց չորս կողմերից ընդհանուր հարձակման անցնելու վերաբերյալ։ Գլխավոր հարվածը հասցվեց Գորիս—Զանգեզուր—Ղարաբաղ ճակատում։ Ընկ. Տոդորսկու խմբակին հրամայվեց աջակցել Ղարաբաղ—Զանգեզուրի խմբակին։

Վերջինս բաժանվեց երեք հարվածային ջոկատների.

ա) Աջ մարտական տեղամասի խնդիրն էր հարձակվել Մեղրու վրա և կտրել Պարսկաստան տանող ճանապարհը։

բ) Միջին մարտական տեղամասը հարձակվելու էր Անգեղակոթի վրա։ Այդ տեղամասում գործում էր 4-րդ հայկական հրաձգային Լոռվա գունդը, որի խնդիրն էր՝ գրավել Սալվարդ սարը[7]։

գ) Ձախ մարտական տեղամասը հարձակվելու էր Քեշիշքենդ—Բալարշայի վրա[8]։

1921 թ. հունիսի 25-ին մեր գունդը շարվեց Էջմիածնի ճեմարանի բակում, որտեղ կայացավ միտինգ։ Ելույթ ունեցավ Ալ. Մյասնիկյանը։ Նա իր ճառն ավարտեց հետևյալ խոսքերով. «Խիտ շարքերով, համարձակ առաջ, մահ թշնամուն, դեպի Զանգեզուր»[9]։

Ապա գնացքով շարժվեցինք դեպի Նախիջևան, հունիսի 26-ին հասանք Շահբուզ գյուղը։ Հետևյալ օրը գունդը շարժվեց Սալվարդ սարի ուղղությամբ, որի ստորոտում, Սիսիանի կողմից, գտնվում էր Ալիլու (այժմ՝ Սալվարդ) գյուղը։ Այստեղ դաշնակներն ունեին սահմանապահ զորամաս, որի դեմ կռվի մտանք հունիսի 29—30-ին և գրավեցինք Սալվարդ սարը։ Կռվի այս գծում լուրջ մարտեր մղեց առաջապահ ստորաբաժանումը, որի կազմում էր Օգանեզովի հրամանատարությամբ գործող 2-րդ գումարտակը։ Թշնամին խուճապահար նահանջեց Բիչանագի ուղղությամբ՝ թողնելով բազմաթիվ վիրավորներ ու սպանվածներ։ Գնդի 3-րդ գումարտակը գրավեց Մազրա գյուղը։ Հուլիսի 1-ի լույս 2-ի գիշերը գումարտակը հանգիստ առավ Ախլաթյան գյուղում։ Մութ, խորհրդավոր գիշեր էր։ Իմ դասակը գտնվում էր վաշտի ձախ թևում։ Հուլիսի 2-ի լուսաբացին հանկարծ մոտիկից լսվեց հրաձգության ձայն։ Պարզվեց, որ թշնամին Քարիդոն սարից անակնկալ հարձակվել է մեր գումարտակի վրա՝ նպատակ ունենալով գրավել Ախլաթյան գյուղը։ Հակառակորդը ամրացել էր տեղանքի վրա իշխող Շլորատի քար բարձունքի վրա, ուր և տեղադրել էր կնդացիրները։ Շուտով դաշնակցականների հետևակն ու հեծելազորը լայն ճակատով գրոհի անցան՝ գյուղն օղակելու նպատակով։ Առաջին գումարտակի բոլոր միավորումները հերոսաբար ընդունեցին մարտը։ Գյուղի գերեզմանա-

---

7 Այս օպերացիայի մասին կա հատուկ գիրք՝ Գ. Օ գ ա ն ե զ ո վ, Նժդեհի հրոսակախմբի ոչնչացումը, Երևան, 1931։

8 Ա. Բ ա զ դ ա ս ա ր յ ա ն, նշված աշխ., էջ 97։

9 Տե՛ս Ա. Մ յ ա ս ն ի կ յ ա ն, Ընտիր երկեր, 1957, էջ 342.

տան քարերի հետևում դասավորված էին Ա. Առաքելյանի խմբի գնդացիրները։ Հակառակորդի շղթան մոտենում էր գյուղին։ Նույն ժամանակ սարից ցած իջնելով թշնամու հեծելազորը թաքնվեց մոտակա բարձունքի հետևում։ Մեր ծանր գնդացրորդները սառնասրտորեն սպասում էին՝ թույլ տալով, որ թշնամին մոտենա։ Երբ արդեն շղթան մոտեցել էր գյուղի կալերին՝ գնդացրորդները սեղմեցին «Վիկկերս» սիստեմի գնդացիրների կոճակները... դրանց ձայնակցեց նռնակների որոտը։ Մարտը բորբոքվում էր անհավասար ուժերի պայմաններում, հակառակորդն ուներ մոտ 800 զինվոր, իսկ մեր գումարտակը՝ 250։ Մեկ միացան նաև Ախլաթյանում և Բենիսում մնացած կոմունիստները և գյուղի տարեց ու երիտասարդ մարդիկ։ Ախլաթյանի բոլշևիկյան կազմակերպության ակտիվի մի մասը գտնվում էր Ղորիսի բանտում, իսկ մյուս մասը փախել էր սարերը՝ սպասելով կարմիր բանակին։ Մարտը տևեց 2—3 ժամ։ Հետևակի համազարկը և գնդացիրների կրակը թշնամուն սեղմեցին գետնին։ Կարմիրբանակայինները գրոհի նետվեցին։ Մեր ուժեղ հարվածի տակ հակառակորդը գլուխը կորցրած ետ փախավ՝ թողնելով վիրավորներ և սպանվածներ։ Կարմիրբանակայինների հետ կողք-կողքի այդ մարտերում կռվում էին նաև Ախլաթյան գյուղի բնակիչներ՝ Ա. Հասրաթյանը, Ռ. Պողոսյանը, Հակոբ Տանին, Մ. Հասրաթյանը և ուրիշներ, իսկ կանայք հերոսաբար ճակատ էին հասցնում ջուր, թան, մածուն և այլն։ Հենց այդ երեկո գյուղում կազմվեց երեք հոգուց բաղկացած հեղկոմ։ Այդ ընկերները առավոտյան մեծ գործ կատարեցին, հեղկոմը անմիջապես անցավ իր հեղափոխական պարտականությունների կատարմանը՝ կազմակերպելով զորամասերին ռազմամթերք և պարենամթերք հասցնելու գործը։ Դաշնակների այդ վերջին մարտերը, որոնք տեղի ունեցան հայ ժողովրդի դավաճան գնդապետ Կուռոյի և Ղափանի զորամասի հրամանատար Գերասիմ Արաջանյանի պլանով, լրիվ ձախողվեցին, Լոռու հայկական 4-րդ գնդի 1-ին գումարտակի կողմից դաշնակները գլխովին ջախջախվելով ետ շպրտվեցին։ Կարմիր գումարտակի հրամանատարն էր Անդրաբաղովը, գումարտակի ծանր գնդացրային խմբի պետ՝ Ա. Առաքելյանը, բուժակը՝ Ռ. Քուրոյանը։ Գումարտակի կազմում հերոսաբար կռվեցին երեք վաշտերի մարտիկները՝ վաշտերի հրամանատարներ Ալ. Ավդալյանի, Մ. Մխչյանի և Տեմուսի գլխավորությամբ։ Այդ մարտում զոհվեց գնդացրորդ Լևոն Ջանիկյանը (Կաղզվանցի)։ Հակառակորդը տվեց մեծ թվով սպանվածներ և վիրավորներ[10]։

Հուլիսի 3-ի լուսաբացին հրաման տրվեց՝ դուրս գալ Ախլաթյանից և շարժվել Դարբաս—Գետաթաղ—Շենաթաղ (ներկայումս Լեռնաշեն) գյուղերով դեպի Տաթև։ Երկու ժամից արդեն Դարբաս գյուղում էինք։ Սա շրջանի ամենամեծ գյուղերից մեկն էր։ Գյուղացիները տեսնելով կարմիր բանակի զորամասերին գյուղի ծայրում՝ կեռաս, բալ և այլ մրգեր էին բերում և հյուրասիրում բանակայիններին։ Փոքր դադարից հետո ուղևորվեցինք դեպի Տաթև։ Մինչ այնտեղ հասնելը մեր անցած ճանապարհն ընդհատվում էր պարսպաձև ժայռերով։ Այդ ժայռերի տակ և սարերի լանջերում տարածված էին գյուղեր։ Մոտենում էինք Սևարանց գյուղին։ Մեր գումարտակը կապ հաստատեց 3-րդ գումարտակի և 180-րդ գնդի հետ, որը ազատագրելով Անգեղակոթը՝ կանգ էր

10 Հետագայում սպարապետ Նժդեհը շրջված է ներկայացրել փաստերը, իբրև թե Ախլաթյան գյուղը իր հրամանով են գրավել Ղափանի դաշնակցական զորամասերը և ապա թողել այն առանց մարտերի։ Տե՛ս «Նորք», 1923, էջ 344, 3-րդ հատոր։

առել նույն գյուղում։ Գումարտակն արդեն Տաթևում էր։ Գյուղի արևմտյան կողմում հավաքվել էին բազմաթիվ գյուղացիներ։ Այստեղ էին մեր գնդի 2-րդ գումարտակը և հեծելազնդի որոշ թիկունքային միավորումներ։ Եկավ գնդի շտաբը։ Գումարտակը բնակչության բուռն ծափերի և ուռաների տակ ուղեկցվեց դեպի նախատեսված վայրը։

Մենք՝ մի քանի բանակային և հրամանատարներ, մտանք վանք և անցանք պստշգամբ։ Այնտեղից մեզ ցույց տվեցին այն վայրը, որտեղից դաշնակները ցած էին գլորել մոտ հարյուր բոլշևիկների, ռուս զինվորների և հրամանատարների, տեղացիների և Երևանի բանտից բերված ընկերների։ Հուզված այդ զարհուրելի տեսարանից՝ վերադարձանք ճամբար։

Գունդը հուլիսի 5-ին Տաթևից շարժվեց դեպի Ղափան, որը մոտ 30 կմ հեռավորության վրա է գտնվում։ Այն ճանապարհը, որով շարժվում էր երթաստյունը, ձգվում էր Տաթև գետի ափով։ Գետի վրա շինված կամուրջը հասարակ քարակոշտերից էր, ուստի և չափազանց վտանգավոր՝ գարնան հորդ անձրևներից վարարած գետի մի ափից մյուսն անցնելու համար։ Ղափանից մոտ 4 կմ-ի վրա հայտնի դարձավ, որ հակառակորդը թողել է Ղափանը և նահանջել է դեպի Մեղրի. օրվա վերջին արդեն Ղափանում էինք։ Բանվորներն ու գյուղացիները սրտանց ընդունեցին մեզ։

Հուլիսի 8-ին գունդը շարժվեց դեպի Քյուրդքենդ և Մեղրի։ Ղափանից մինչև Քյուրդքենդ մոտ 35 կմ է։ Այդ երկար տարածությունը կտրելը դժվար և հոգնեցուցիչ էր, մանավանդ տաք եղանակին.

Հուլիսի 10-ին երկրորդ գումարտակի հետախուզությունը հայտնեց, որ Քյուրդքենդում թշնամի չկա։ Գյուղացիները տեղեկացրին մեզ, որ նժդեհն իր խմբով խուստուփ սարից փախել է Մեղրի, և որ դաշնակների ողջ «բանակը» ջարդվել, քայքայվել է, իսկ մի մասն էլ խուճապահար սպասում է՝ Արաքսն անցնելու և ապաստան գտնելու Պարսկաստանում։

Հուլիսի 12-ին, Մեղրու մոտ, 12-րդ կմ-ի վրա մեր բանակին մեծ դաղար տրվեց։ Գիշերն անցկացրինք Լիճք գյուղում։

Հուլիսի 13-ին, առավոտյան ժամը 6-ին իմացանք, որ հակառակորդը Արաքսի ափին թողել է մեծ թվով զաղթականություն, մի քանի թնդանոթ, հրացաններ և այլ զինամթերք, իսկ ինքը փախել է Պարսկաստան[11]։ Հետախուզության հաղորդած այդ լուրի հիման վրա, 2-րդ գումարտակի հրամանատար ընկ. Օգանեզովին հրամայվեց շարժվել դեպի Մեղրի։ 1921 թ. հուլիսի 13-ի օրվա առաջին կեսին Օգանեզովի գումարտակն արդեն Մեղրիում էր, իսկ 1-ին, 3-րդ գումարտակները և մյուս մասնագիտացված միավորումները պետք է վերադառնային Գյուղկյում գյուղը, որտեղ նոր կարգադրություն էր տրվելու։

Հուլիսի 13-ին անտառի մեջ միտինգ կայացավ, որին մասնակցեցին բոլոր զորամիավորումները՝ բացառությամբ 2-րդ գումարտակից, որ մեկնել էր Մեղրի։ Միտինգը բացեց գնդի զինկոմը։ Նա հայտնեց մեր հարձակման արդյունքները։ Միտինգից հետո, տրված հրամանի համաձայն, առաջին և երկրորդ գումարտակները վերադարձան Ղափան։ Մի քանի ժամվա երթից հետո հեռվում երևաց Ղափանը՝ պղնձի հանքերի աշխարհը։

---

11 Ն. Բաղդասարյան, Քաղաքացիական պատերազմը Հայաստանում։ Դաշնակցության քարտեզ, № 9։

Հուլիսի 14-ին մեր վաշտը շարժվեց դեպի Կավարտ, որտեղ գյուղացիների կողմից սրտագին ընդունելություն գտավ։

Այսպիսով, 1921 թ. հուլիսի 13-ին ավարտվեցին բաղաքացիական կռիվները Հայաստանում, որոնք տևեցին շուրջ յոթ ամիս։

11-րդ կարմիր բանակի և հայկական կարմիր բանակի զորամասերը, որոնք մասնակցեցին Գառնիի, Զանգեզուրի և Ղամարլուի բաղաքացիական կռիվներին, ինչպես նաև Թբիլիսիի ազատագրմանը, ցուցաբերեցին անբրինակ բաջություն։ Սեպտեմբերի առաջին կեսին գունդը շարժվեց դեպի Գորիս։ Մի բանի ժամից հետո գնդին դիմավորեցին Քարահունջ գյուղի բնակիչները։ Ապա գյուղացիների ուռաների և ծափերի տակ բարձրացանք Գորիս։ Մեծ բազմություն էր հավաքվել տեղի ռուսական եկեղեցու բակում, որտեղ կազմակերպվեց միտինգ։ Միտինգը ավարտվելուց հետո գունդը իր միավորներով տեղավորվեց նախկին խանութներում։ Գորիսում զորացրվեցին մեծահասակները։ Զորացրման առթիվ կազմակերպվեց հրաժեշտի երեկույթ։ Զորացրված ընկերներին մյուս օրը առավոտյան նվագախմբով ճամփու դրինք։

1921 թ. դեկտեմբերի վերջերին գունդը Գորիսից տեղափոխվեց։

Զորասյունը շարժվեց առաջ։ Նախքան Խանքյանդ հասնելը (այժմ Ստեփանակերտ)՝ բնակիչները հեռվից տեսնելով զորքի շարասյունը, հավաքվեցին մեր շուրջը։ Նվագի հնչյունների տակ մեզ ուղեկցեցին դեպի այն վայրը, ուր պետք է գիշերեինք։ Մյուս օրը եղանք Բարդա գյուղում, իսկ դեկտեմբերի 22-ի երեկոյան գունդն արդեն Եվլախ կայարանում էր։ Հնչեց գնացքի սուլիչը, որը երկար ժամանակ չէինք լսել։ Դեկտեմբերի 28-ին գնացքը կանգ առավ Նավթյուղ կայարանում, անցանք Քուռ գետը։ Բանակայինները վագոնի մի անկյունում նստած իրար հետ զրուցում էին և ձեռքով ցույց տալիս մենշևիկների հետ տեղի ունեցած մարտերի վայրերը։ Մի մասն էլ վագոնում զվարճանում էր երգ ու պարով։ Անցանք Խրամ գետի կամուրջը։

Դեկտեմբերի 31-ի լուսաբացին հասանք Ղարաքիլիսիա (այժմ Կիրովական)։ Գնացքն այնտեղ կանգ առավ մոտ երկու ժամ։ Հրաման տրվեց, որ առաջին գումարտակը մեկնի Երիջան և միանա 1-ին գնդին, իսկ 3-րդ գումարտակը միանա 2-րդ գնդին, որն այդ ժամանակ գտնվում էր Երևանում։

1922 թ. Խորհրդային Հայաստանի կարմիր բանակը, ինչպես ամբողջ ԲԳԿԲ, կրճատման ենթարկվեց։ 1922 թ. հունվարի առաջին կեսին լուծարքի ենթարկվեց կարմիր բանակի մի միավորը՝ Լոռու 4-րդ հայկական գունդը, որը բաղկացած էր հայ ժողովրդի լավագույն զավակներից։ Նրա հրամանատարներից և շարքային մարտիկներից շատերը հետագայում՝ Հայրենական պատերազմում հասան գեներալի կամ գնդապետի աստիճանի։ •

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

Մարտերի մասնակից, նախկին դասակի հրամանատար, ներկայումս պաշտոնաթող փոխգնդապետ